ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2008թ. սեպտեմբերի 25-ի թիվ 5 նիստում

Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
«25» սեպտեմբերի 2008թ.

ԳԽ Նախագահ, տնօրեն

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿՈՒՐՍ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. 1. Սույն կանոնակարգով սահմանվում է *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն կուրս»* մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կարգը:

1. 2.*«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն կուրս»* մրցանակաբաշխությունը կազմակերպվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում 2 անգամ կիսամյակի արդյունքներով, որի նպատակն է խրախուսել մասնաճյուղի ֆակուլտետների բոլոր կուրսերի ուսանողների կրթական, գիտական, հասարակական ակտիվությունը և կարգապահությունը:

1. 3. Սույն կանոնակարգը հաստատվում, դրանում փոփոխություններ և լրացումներ են կատարվում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

2. «ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿՈՒՐՍ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2. 1. *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն կուրս»* մրցանակաբաշխությունը կազմակերպում և անցկացնում է *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն կուրս»* մրցանակաբաշխության հանձնաժողովը (այսուհետ՝ *Հանձնաժողով*):

2. 2. *Հանձնաժողովը* բաղկացած է 8 անդամից, որի կազմի մեջ մտնում են մասնաճյուղի տնօրենի օգնականը (արհմիության նախագահը), ուսումնամեթոդական բաժնի վարիչի տեղակալը, ֆակուլտետների դեկանները, ուսանողական խորհրդի նախագահը,

ուսանողական գիտական ընկերության նախագահը, ուսանողական գիտական ընկերության նախագահը:

Հանձնաժողովի անդամներն իրենց գործունեությունը իրականացնում են հասարակական հիմունքներով:

2. 3. *Հանձնաժողովը* նախագահում է տնօրենի օգնականը:

2. 4. *Հանձնաժողովը* հաստատում է իր գործունեության աշխատակարգը:

2. 5. *Հանձնաժողովի* նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին:

2. 6. *Հանձնաժողովի* որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

3. ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3. 1. Մրցանակաբաշխության անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ ֆակուլտետներում անցկացվում է «Ֆակուլտետի լավագույն կուրս» մրցանակաբաշխություն ֆակուլտետի խորհուրդը քննարկում և մասնաճյուղի հանձնաժողովին է ներկայացնում «ֆակուլտետի լավագույն կուրս» մրցանակի հավակնող կուրսի վերաբերյալ ֆակուլտետի խորհրդի որոշման քաղվածքը:

3. 2. Ֆակուլտետի դեկանը *Հանձնաժողովին* ներկայացնում է ֆակուլտետի լավագույն կուրսի վերաբերյալ բնութագրական տվյալները, ֆակուլտետի ուսանողական կազմակերպությունների որոշումները:

4. «ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿՈՒՐՍ» ՄՐՑԱՆԱԿԱԿՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

4. 1. Ներկայացված թեկնածուներից լավագույնին ընտրելու գործընթացում ֆակուլտետի դեկանատը և *Հանձնաժողովը* առաջնորդվում են հետևյալ հիմնական չափորոշիչներով.

ա/ կուրսի ուսանողների ուսման առաջադիմություն

բ/ գիտական աշխատանքներ կատարելու ունակություն

գ/ կուրսի ուսանողների հասարակական ակտիվություն

դ/ օրինակելի վարք:

4. 2. Ներկայացված թեկնածուների գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը գնահատվում է 5-7 միավորներով:

- 5միավորի կարող է հավակնել այն կուրսը, որի ուսանողները մասնակցել են ներմասնաճյուղային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն պատվոգրեր, գովասանագրեր, դիպլոմներ :
- 6 միավորի կարող է հավակնել այն կուրսը, որի ուսանողները մասնակցել են հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում:
- 7 միավորի կարող է հավակնել այն կուրսը, որի ուսանողները մասնակցել են միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում:

4. 4. Ներկայացված թեկնածուների հասարակական ակտիվությունը գնահատվում է 3-5 միավորներով:

- 3 միավորի կարող են հավակնել այն կուրսերը, որոնց ուսանողները ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն:
- 4 միավորի կարող են հավակնել այն կուրսերը, որոնց ուսանողները ունեն մասնաճյուղային հասարակական ակտիվություն:
- 5 միավորի կարող են հավակնել այն կուրսերը, որոնց ուսանողները ակտիվորեն ներգրավված են արտահամալսարանական աշխատանքներում:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. 1. Հանձնաժողովի կողմից ընդունած որոշումները կարող են բողոքարկվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենին, «Լավագույն կուրս» մրցանակաբաշխության անցկացման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:

5. 2. Հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման կամ «Լավագույն կուրս» մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման գործընթացում ՀՀ օրենսդրության, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրության և սույն կանոնակարգի խախտումներ ի հայտ գալու դեպքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենը գրավոր, պատճառաբանված որոշմամբ անվավեր է ճանաչում «Լավագույն ուսանող» մրցանակակրի ընտրությունը և 10-օրյա ժամկետում նշանակում է նոր ընտրություն: